ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Կրթական բարեփոխումների և հմտությունների զարգացման աջակցություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում (SER)

Իրականացման ժամանակահատված: 01.01.2024 - 30.12.2026

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 500 000

Ընդհանուր բյուջե: € 2 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

European Training Foundation (ETF)

Նախագծի կայքէջ: etf.europa.eu/en/eapeducation

Նախագծի նկարագրություն:

«Կրթական բարեփոխումների և հմտությունների զարգացման աջակցություն» (SER) նախաձեռնությունը Եվրոպական միության առաջին տարածաշրջանային ծրագիրն է, որը կենտրոնանում է կրթության ոլորտի վրա Արևելյան գործընկերության տարածաշրջանում: 2.5 միլիոն եվրո արժողությամբ և երեք տարի տևող (2024–2026 թթ.) ծրագիրը նպատակ ունի բարձրացնել կրթական համակարգերի արդյունավետությունը, որակը, արդարությունն ու հավասարությունը, ինչպես նաև դրանց համապատասխանությունն արդի պահանջներին՝ միաժամանակ ապահովելով դրական, երկարաժամկետ և կայուն փոփոխություններ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի կրթության ոլորտում:
Ծրագիրը հիմնված է երեք առանցքային հենասյուների վրա.
1. Արագ կրթական ախտորոշում – ոլորտային համապարփակ վերլուծություն՝ հիմնված երեք թեմատիկ ուղղությունների վրա՝ անհավասարություններ, ֆինանսավորում և կառավարում:
2. Քաղաքականությունների իրականացման կարողությունների զարգացում – հիմնվելով արագ կրթական ախտորոշման մեթոդաբանության վրա՝ այս հենասյունը միտված է ոլորտային ռազմավարությունների արդյունավետ իրականացման կարողությունների ամրապնդմանը և նպատակ ունի արձագանքել երկրներում բացահայտված մարտահրավերներին:
3. Տարածաշրջանային մակարդակով ուսուցում և համադրելի ուսուցում (peer learning) – այս հենասյան շրջանակում իրականացվող գործողությունները ուղղված են երկրների համար ընդհանուր խնդիրների

Ակնկալվող արդյունքներ:

Սույն Գործողության շրջանակում նախատեսվում է ապահովել հետևյալ ելքային արդյունքները, որոնք կնպաստեն համապատասխան հատուկ նպատակների իրականացմանը.
Ելքային արդյունք 1. Ավարտված են ազգային կրթական համակարգերի ախտորոշումները (առավելագույնը՝ 5) (Առաջին հենասյուն):
Ելքային արդյունք 2. Ամրապնդված են ազգային վարչական մարմինների և հաստատությունների կարողությունները կրթության ոլորտի կառավարման, ֆինանսավորման և պլանավորման ուղղություններով (Երկրորդ և Երրորդ հենասյուներ):
Ելքային արդյունք 3. Ընդլայնված են վերապատրաստման և համադրելի ուսուցման (peer learning) հնարավորությունները (Երրորդ հենասյուն):